



Ի Լ Ի Ա Ճ Ա Ի Ճ Ա Ի Ա Չ Է

Վրաց տաղանդաւոր բանաստեղծ և հասարակական գործիչ իշխան Իլիա Ճաւճաւաձէն սգոտօտի 30-ին ողբերգական մահով կնքեց իւր մահկանացուն։ Նա իւր կնոջ հետ Թիֆլիսից այն օրը վերադառնում էր կառքով իւր սեպհական կալուածքը Սագուրամոյ, երբ ոչ հեռու գիւղից, անտառից յարձակուեցան նրանց վերայ չորս աւաղակներ կողոպտելու նպատակով։ Նախ սպանեցին ուղեկցող ծառային, ապա իշխանին, երբ նա հանելով տորճանակը, կամենում էր պաշտպանուել։ Բարբարոսները ձեծի են ենթարկել և իշխանուհուն և վէրքեր հասցրել։ Վրաց հասարակութիւնը սուղի մէջ է իւր բանաստեղծի այսպիսի անակընկալ և ողբերգական մահուան պատճառով։

Իլի Ճաւճաւաձէն ծնուած է 1837 թ., նա իւր սկզբնական և միջնակարգ ուսումն ստացել է Թիֆլիսում, իսկ բարձրագոյնը Պետերբուրգի համալսարանում, որ սակայն չի աւարտել ընտանեկան հանգամանքների պատճառով։ Ողջութեամբ նա կատարում էր հաշտարար միջնորդի և ապա դատաւորի պաշտօն Դուշետի գաւառում։ 1874 թ. հիմնուեցաւ Թիֆլիսի ազնուականների հոգային բանկը, որի նախագահ ընտրուեց հանգուցեալը և այդ պաշտօնի մէջ մնաց մինչև 1906 թ., երբ նա ընտրուեց պետական խորհրդի անդամ և փոխադրուեց Պետերբուրգ։

Իլիա Ճաւճաւաձէն վրաց նոր գրականութեան առաջնակարգ ուժերից մէկն է. նա առաջին անգամ հանդէս է գալիս 1861 թուին, աշխատակցելով «Յիսկարի» ամսաթերթում։ Ապա 1863 թ. մի խումբ աշխատակիցների հետ հրատարակում է «Ստքարթվէլոս-Մօամբէ» ամսաթերթը, որ մէջ մաքառում էր ճորտութեան դէմ։ Բայց

նա աւելի նշանաւոր է հանդիսացել իբրեւ բանաստեղծ և վիպասան. այստեղ ևս նորա առաջին երկերը՝ «Ազդրիլի» (ուրուական), «Կաչաղի Կակոյ» (Աւազակ Կակոյ), «Գլախիս Նաամբոբի» (Մուրացկի պատմուածք) կապուած են ճորտութեան դէմ՝ մաքառելու գաղափարի հետ: Նորա գրական գործունէութեան երկրորդ շրջանին նիւթ են ծառայում աւելի ընդհանուր խնդիրներ և ազգային գաղափարներ՝ ինչպէս «Դեղա դա շվիլի» (մայր և որդի) և «Մեպէ Դիմիտրի տաւ դագիբուլի» (Թագաւոր Դիմիտրի) պօէման, լցուած հայրենասիրական զգացմունքով: 1883 թուից «Դանդեգիլի» (ճգնաւոր) պոյէմայով սկսում է երրորդ՝ զուտ գեղարուեստական շրջանը: 1857 թ. գրում է «Կվարելի Լեռներին» ոտանաւորը, իսկ 1896 թ. «Բազալէտի լիճը» պօէման, որ վերջինն է նորա բանաստեղծական արտադրութիւնների մէջ:

Վրացի, հայ և ռուս թերթերը լի են նորա յիշատակին նուիրուած համակրական յօդուածներով: Թաղումը կատարուել է սեպտ. 10-ին մեծ հանդիսաւորութեամբ և չքով:

ՃՈՒՋԵՊԷ ԳԱՐԻԲԱԼԴԻ

1807—1882

(Ծննդեան հարիւրամեակի առթիւ)

Ես զինուոր չեմ. ոչ էլ զինուորական արուեստը սիրում. այլ տեսայ իմ հայրենի տունը աւազակներով լի եւ զէնք տոյժ նոցա դուրս անելու համար. ես մշակ եմ ևւ մշակներից, ծագած. որով եւ պարծենում եմ.

Գարիբալդի.

Վեննայի վեհաժողովից յետոյ Իտալիան ներկայացնում էր լոկ մի աշխարհագրական անուն: Չկար Իտալիական պետութիւն կար Սադիկնիս, Տսուկանա, Պասպի կալուածք, երկու